

Ա. Ր Զ Ա. Ն Ա. Գ Ր ՈՒԹ Ի Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ

ԳՈՒՄԱՐՈՒԱԾ 1955 ԹՈՒԱԿԱՆՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 29ԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՈՒ Ա. ԷԶՄԻԱՆՆԻ ՄԷՋ



Յերեկուան ժամը 12ին հոգեւորական եւ աշխարհական պատգամաւորները կը հաւաքուին Վեհարանի բակը եւ հանդիսաւոր թափօր կազմած, կը զիմեն դէպի Ս. Էջմիածնի Հոգեւոր ձեմարանի մեծ սրահը, ուր կայանալու են Ս. Ազգային - Եկեղեցական ժողովի նիստերը:

Ժողովը աղօթքով կը բանայ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի նախագահող Գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանեան, որմէ յևոյ Կ'առաջարկէ մէկ բովէ յոտնկայս յարգել հանգուցեալ Կաթողիկոս երջանկայիշատակ Տ. Տ. Գէորգ Զ. ի յիշատակը:

Այսունիւնեւ Տ. Վահան արքեպիսկոպոս կը սկսի իր բացման նառը, որուն մէջ կը խօսի Մայր Սթոռ Ս. Էջմիածնի պատմական դերին, անոր հայրենասիրական եւ կրոնական գործերուն եւ անոր ներկայ ու մերծաւոր ընելիքներուն մասին: Դիմելով պատգամաւորներուն, սրբազնը զերմօրէն կ'ողջունէ զանոնք ու կը մաղթէ արդիւնաւէտ աշխատանք այն մեծ գործին մէջ, որուն համար անոնք Էջմիածնի են նկեր աշխարհի բոլոր ծագերէն:

Սրբազնը իր խօսքին մէջ հանգուցեալ Գէորգ Զ. Կաթողիկոսի անունին հետ միասին կը յիշատակէ նաև այս վերջին տարիներու ընթացքին վախճանած բարձրատիճան եկեղեցականներ՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Ա. ի, Կոստանդնուպոլիսի Պատրիարքական տեղապահ Տ. Գէորգ արքեպիսկոպոս Սրբանեանի, Եւրպայի Կաթողիկոսական պատուիրակ Տ. Արտաւազդ արքեպիսկոպոս Սիւրմէեանի, Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամ Ռուբէն արքեպիսկոպոս Դրամբեանի անունները և նորէն կ'առաջարկէ յոտնկայս յարգել անոնց յիշատակը:

Գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոսի առաջարկութեամբ կ'ընտրուին ժողովի գործադիր մարմինները հետեւեալ անձնաւորութիւններէն.

Նախագահի փոխանորդներ

1. Տ. Մամբրէ արքեպիսկոպոս Սիրունեան (առաջնորդ Եղիպտահայ թեմի).
2. Տ. Մամբրէ արքեպիսկոպոս Գալֆայեան (առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի հայոց Արևելեան թեմի).
3. Տ. Վազգէն եպիսկոպոս Պալճեան (առաջնորդ Ռումանիայ թեմի):

Առենապետներ

1. Վարպետը (Աւետիք Խսահակեան).
2. Ակադեմիկոս Մարտիրոս Սարեան.
3. Պ. Հրանդ Նասիպեան (Եղիպտոսէն).
4. Պ. Սարգս Քիւրքեան (Լոնսոնէն):

Քարտուղարութիւն

1. Տ. Շնորհը ծայրագոյն վարդապետ Գալուատեան (առաջնորդ Գալիֆորնիոյ).
2. Պ. Հայկ Սուաքելեան (Մայր Սթոռի դիւնապետ).
3. Պ. Սմբատ Դովլաթեան (Վրաստանի թեմի):

Խմբագրական յանձնաժողով

1. Տ. Մերովը՝ ծայրագոյն վարդապետ Մանուկեան (Կաթողիկոսական պատուիքակ Եւրոպայի)։
2. Պրոֆ. - դոկտ. Ա. Գ. Արքահամեան,
3. Պրոֆ. - դոկտ. Ա. Ղարիբեան։

Մանդատային յանձնաժողով

1. Տ. Հայկազուն ծայրագոյն վարդապետ Արքահամեան (Ներկայացուցիչ Երուսաղէմի Պատրիարքական Աթոռի)։
 2. Պ. Հմայեակ Սեղգարեան (Մայր Աթոռի Ելեւմտական եւ տնտեսական բաժնի Աթոռի)։
 3. Պ. Հայկ Առաքելեան (Մայր Աթոռի դիւանապետ)։
- [պետ]։



Ազգային - եկեղեցական պատկառելի ժողովի պատգամաւորութիւնը (7 Հոկտ. 1955)

Ժողովը վարող գործադիր մարմիններու ընտրութենէն յետոյ նախագահը խօսքը կու տայ Պրավուլաւ եկեղեցւոյ ներկայացուցիչ մետրապոլիտ Պետերիմին, որ ռուսական լեզւով կը կարդայ Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարք Նորին Սրբազնութիւն Ալեքսիի ուղերձը, որով ան իր մաղթանքներն ու օրհնութիւնները կը յուշ Ազգային - եկեղեցական ժողովին՝ ցանկալով անոր արդիւնաւէտ աշխատանք։ Ուղերձի թարգմանութիւնը կը կարդայ Բարձրապատիւ Տ. Գէորգ ծայրագոյն վարդապետ Վաթեան, որմէ յետոյ կը յայտարարուի ընդմիջում, որպէսզի հնարաւորութիւն տրուի մանդատային յանձնաժողովին իր պարտաւորութիւնները կատարելու։

Հնդմիջումէն յետոյ ժողովը կը վերսկսի ժամը 2.15ին։ Գերաշնորհ Տ. Վահան արքապիսկոպոս վերստին կ'առաջարկէ յոտնկայս հոգւոց ըսել երջանկայիշակ Տ. Տ. Գէորգ Զ. Կաթողիկոսի յիշատակին։

Մանդատային յանձնաժողովի կողմէն յայտարարութիւն կ'ընեն Տ. Հայկազուն ծայրագոյն վարդապետ Արքահամեան եւ ալ. Հայկ Առաքելեան։ Տրուած տեղեկագրէն կը պարզուի, որ Ազգային-եկեղեցական ժողովի հրաւիրուած սիմվոլահայութեան 61 պատգամաւորներէն ներկայ են 32 հոգի, ըստ հետեւեալ ցանկի։

Գալիֆորնիայէն՝ 4 հոգի, Ֆրանսայէն՝ 5, Պուլկարիայէն՝ 3, Հիւսիսային Ամերիկայի Արևելիան թեմէն՝ 9, Երուարէմէն՝ 2, Եղիպատուէն՝ 3, Անգլիայէն՝ 2, Ռումանիայէն՝ 2, Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն՝ 2, ընդամէնը՝ 32։

Խանօր. — Կոստանդնուպոլիսի ներկայացուցիչներ նշանակուած են Գերաշնորհ Տ. Մամբրէ արքեպիսկոպոս Սիրունեան, Գերաշնորհ Տ. Վազգէն եպիսկոպոս Պալմեան, բանաստեղծ Աւետիք Իսահակեան, պրով.-դոկտ. Ա. Գ. Արքահամեան, ալ. Հրանտ Նախարար։

Սովետական Միութեան հանրապետութիւններէն ժամանած, հրաւիրուած եւ ներկայ պատգամաւորներու ընդհանուր թիւն է 108 հոգի, ըստ ցանկի։

Նոր-Նախիջևանի եւ Ռուսովի թեմէն՝ 18 հոգի, Ատրավենանի եւ Քուրքեստանի թեմէն՝ 20, Վրաստանի թեմէն՝ 18, Շիրակի թեմէն՝ 19, Սրարատեան թեմէն՝ 30, եւ Էջմիածնէն՝ 3, ընդամէնը՝ 108։

Փոխնախարար Տ. Մամբրէ արքեպիսկոպոս Սիրունեան կը յայտարարէ, որ սոյն թուականի Սեպտեմբեր 28ին Մայր Աթոռին մէջ կայացած եպիսկոպոսական ժողովի որոշումով ատենապետութեան կազմի մէջ կը հրաւիրուին նաեւ երկու եկեղեցականներ՝ Գերաշնորհ Տ. Վարդան արքեպիսկոպոս Գասպարեան (Գալիֆորնիայէն) եւ Սիրունեան Կոստանդնուպոլիսի Հարաւային Ամերիկայէն)։

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհրդի 1954 թուականի տարեկան եւ 1955 թուականի առաջին կիսամեայ գործունէութեան մասին մանրամասն զեկուցում կարդաց Գերագոյն Հոգեւոր Խորհրդի նախագահով Գերաշնորհ Տ. Վահան արքեպիսկոպոս Կոստանդնուպոլիս (զեկուցումը կը կցուի ներկայ արձանագրութեան)։ Ապա Գերաշնորհ Տ. Մամբրէ արքեպիսկոպոս Սիրունեան դիմելով պատգամաւորներուն՝ յայտարարեց, որ ժողովականները արտայայտուին կամ հաստատեն զեկուցումը։

Այս մասին պատգամաւոր ալ. Տիգրան Մամարեան (Հիւսիսային Ամերիկայէն) առաջարկեց զեկուցումը ընդունիլ Գերաշնորհ Տ. Գերենիկ եպիսկոպոս Փոլատեան երկրորդից, իսկ Հոգ. Տ. Սիրովը ծ. Վարդապետը բարեփոխեց զայն՝ ընդունիլ գոհունակութեամբ եւ շնորհակալութեամբ։ Ժողովը միաձայնութեամբ ընդունեց բարեփոխեալ առաջարկը։ Վահան արքեպիսկոպոս Գերագոյն Հոգեւոր Խորհրդի հաշուեատուութեան ըննութիւնը յանձնել վերստուգիչ յանձնաժողովի վերաբնուութեան։ Պրոֆ. Արքահամեան գոտաւ, որ այդ անհնար է ներկայ պայմաններու մէջ, իսկ Վազգէն Սրբազնը աւելցուց, որ յառաջիկայ նորընտիք Գերագոյն Հոգեւոր Խորհրդին կից կ'ընտրուի վերստուգիչ յանձնաժողով, որ վերստուգման գործը կը կատարէ տարուէ տարի։

Այս կապակցութեամբ Գերաշնորհ Տ. Գերենիկ եպիսկոպոս Փոլատեան առաջարկեց զրաւոր կերպով մեծ շնորհակալութիւն յայտնել Սովետական Հայաստանի բարեխնամ կառավարութեան, որ այնքան մեծ նոգատարութեամբ կատարեր է Մայր Տաճարի վերանորոգութիւնը։ Ժողովը ծափահարութեամբ ընդունեց առաջարկը։

Ժողովի այս նիստի օրակարգը աւարտած ըլլալով, Գերաշնորհ Տ. Մամբրէ արքեպիսկոպոս Սիրունեան յայտարարեց, որ վազը (Սեպտեմբեր 30-ին), առաւատեան ժամը 10ին կը մատուցուի սուրբ պատարագ Մայր Տաճարին մէջ եւ կը կատարուի հանդիսաւոր հոգեհանգիստ՝ ի յիշատակ երանաշնորհ Գէորգ Զ. Կաթողիկոսի, այնուհետեւ տեղի կ'ունենայ հայրապետական ընտրութեան նիստը։

Ժողովը աւարտեցաւ ժամը 4.45ին։

(ՃԱՐԹԻՆԱԿԵԼԻ)